ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2019 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է
“Գնումների մասին” ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը **ՋԿ–ԳՀԱՇՁԲ-19/5-Ն**

Ջրային կոմիտեի կարիքների համար ՀՀ Վայոց Ձորի մարզի Հեր-Հերի ջրամբարից ինքնահոս ջրատարի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքնության տրամադրման աշխատանքների ձեռքբերման ձեռքբերման նպատակով կազմակերպված ՋԿ–ԳՀԱՇՁԲ-19/5-Ն ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 17.10.2019թ. ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ 18.10.2019թ. տրամադրված պարզաբանումները՝

Հարցադրում N 1 Համաձայն ՀՀ Վայոց Ձորի մարզի Հեր-Հերի ջրամբարից ինքնահոս ջրատարի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքնության տրամադրման աշխատանքների կատարման պայմանագիր ՋԿ–ԳՀԱՇՁԲ-19/5-Ն հրավերի թերթ 36 աշխատանքների կատարման ժամանակացույցով նախատեսված է 4 ամիս, սակայն թերթ 37 -ի *-ով ծանուցման մեջ նշված է՝ աշխատանքի կատարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը: Պայմանագրի կնքման հնարավոր ժամանակահատվածը ստացվում է Նոյեմբերի 1-5 ը: Հետևաբար առաջանում է հակասություն աշխատանքների կատարման ժամանակացույցով նախատեսված 4 ամսվա և *-ով ծանուցման միջև:

Պարզաբանում N 1 Գնանշման հարցման ՋԿ–ԳՀԱՇՁԲ-19/5-Ն ծածկագրով ընթացակարգն իրականացվում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն կիրականացվի այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում:

Աշխատանքների կատարման ժամկետը կհաշվարկվի համաձայնագրի ուժի մեջ մտնելու դեպքում, որը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել
ՋԿ–ԳՀԱՇՁԲ-19/5-Ն ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Ա. Սարգսյանին:

Հեռախոս՝ 010 54 02 29:

Էլեկտրանային փոստ՝ *«finansakan2013@mail.ru»*:

ՋԿ–ԳՀԱՇՁԲ-19/5-Ն ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը